

## ԲԱՌԱՔՆՆԱԿԱՆ ՄԻ ՔԱՆԻ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Լ. Շ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

### ԱՄՈՔԻԱԾ

Բառը վկայված է V դարից: Ստուգաբանության համար դժվարություն /, ստեղծում խառն քաղաղորդիչը: Գրվում է նաև ամօթղած: Գրաբարում խ-ը դրույթյամբ բառային տարբերակներ շատ կան. ածուխ—ածուղ, ախաւնդա—գլխ—աղաւնխազէս, թախիծ—թաղիծ, ախմար—աղմար, սանդուխք—սանդուղք և այլն: Այս կարգի բառերում անպայմանորեն բաղաձայններից մեկը նախնական է եղել, ստուգաբանորեն ճիշտ: Բառային տարբերակների առաջացումը պայմանավորված է խ և ղ հնչյունների ընդհանրությամբ՝ որոշ գիրքերում: Արդի հայերենում էլ այդ հնչյունները տարբերակվում են միայն ձայնեղութային հատկանիշով: Դ-ն որոշ թույլ դիրքերում կարող է կորցնել իր ձայնեղութային հատկանիշը և նմանվել խ-ին<sup>1</sup>:

Արդյոք նշված զուգաձևություններում նախնականը խ-ն է թե՞ ղ-ն: Թեև Արմատական բառարանում դրանք ստուգաբանված չեն, սակայն ըստ երեւութին Աճառյանը ճիշտը համարում է խ-ով ձևերը՝ դրանք ներկայացնելով որպես գլխարառեր: Քննությունը ցույց է տալիս, որ այդ կարգի բառերից մի քանիսը նախապես ունեցել են ղ: Այդպես է հենց ամօթխած բառում: Թեպետ արդեն V դարում առկա են ամօթխած և ամօթղած գրությունները (եթե առաջինը հետին գրություն չէ), սակայն ղ-ի նախնականությունը հաստատվում է բառի մեկ այլ գրությամբ՝ ամօթլեամ: Ձև հանդերձ այնու ամենայնիւ յորժամ դրաւ հարսանեացն լինիցի, առեալ միայն ընդ միայն խրատիցես, զամօթլեամ բարսն եւեթ յանձին ունել և շրնկենուկ երբէք զայն ի բացա՞: «Մինչդեռ ամօթլեամ իցէ՝ ստէպ խրատիցէս»<sup>2</sup>: Լ>Դ-ի հարցը հայագիտության մեջ վաղուց հիմնավորված է: Նշենք միայն, որ հենց լի բառը ղ տարբերակով հայտնի է յղի բառում: Ուրեմն, ամօթլեամ ձևի մեջ կարող ենք տեսնել ամօթլի + ամ կազմությունը, որն օրինաչափորեն տալիս է ամօթլեամ՝ բառացի «ամոթով լցված»: Գոյական + լի կաղապարը բավական գործուն էր գրաբարում. Հմմտ. գանալի, թիւնալի, պողալի, պաստառալի, բերանալի, ծայրալի, պաստառալի և այլն: Ուրեմն, նախապես եղել է ամօթլեամ—ամօթղեամ (այս ձևերը վկայում է նոր Հայկազյան բառարանը. այսուհետև՝ ՆՀԲ), հետո՝ ամօթղած—ամօթխած: Կարող է որոշ առարկությունների տեղիք տալ -ա- հոդակապի հարցը: ՆՀԲ-ն վկայում է միայն ամօթալի ձևը: Գրաբարում կան հոդակապով և առանց հոդակապի բազմաթիվ տարբերակներ. աղօթալիք-աղօթկեր, նախագոյն-նախգոյն, ջրաբուղիս-ջրբուղիս, ջրակիր-ջրկիր, վատատոհմակ-վատտոհմակ... (բոլոր զուգաձևությունները V դարից են): Բացառված չէ և ամօթլի ձևի առկայությունը V դարում: Մյուս կողմից, նկատված է, որ հաճախ, երբ բառը երկարում է, հոդակապը սղվում է. ողջամիտողջամիտութիւն, շատախօս-շատխօսութիւն, ընկերահաշտ-ընկերհաշտութիւն և այլն<sup>3</sup>: Կարելի է կարծել, որ ամօթալի բառին ավելանալով ամ մասնիկը -ա- հոդակապը սղվել է: Լ(ղ)-ի նախնականությունը խ-ի հանդեպ թույլ է

<sup>1</sup> Տե՛ս Ժամանակակից հայոց լեզու. Երևան, 1979, էջ 56:

<sup>2</sup> Յովհաննու Ոսկերեքանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի մեկնություն թոթոյն Գալղոսի. Վենետիկ, 1862, էջ 895:

<sup>3</sup> Նույն տեղում:

<sup>4</sup> Այս երևույթը նկատել է դեռևս Ա. Մեյլեն. տե՛ս Ա. Մեյլեն. Հայագիտական ուսումնասիրություններ. Երևան, 1978, էջ 91—92: Նաև՝ Լ. Հովհաննիսյան. Գրաբարի բառակազմությունը. Երևան, 1987, էջ 92:

տալիս նկատելու ստուգաբանական որոշ յուրահատկություններ իւ-զ զուգա-  
ձեռնությունները ներկայացնող այլ բառերի համար: Մեր կարծիքով թախիծ-  
(թաղիծ)-ի արմատը թալ-ն է անվաղում, կսկիծ», որն անկախաբար հանգես  
չի գալիս, այլ՝ թալանալ «թմրել, թուլանալ», թալուկ, թալկանալ և այլն: Ի  
դեպ, թալ արմատի մեկ այլ տարբերակն է թերևս և տալտ-ը (տ աճակա-  
նով), որից՝ տաղտաղտ «ձանձրալի», տաղտկանալ «ծանրություն չդիմանալ»<sup>5</sup>:  
Եթե մերժելի չէ թալ արմատի առկայությունը վերոհիշյալ բառերում, ապա  
թաղանձ/թախանձ բառաձևերում էլ նույն արմատի գոյությունը կասկածից  
դուրս պետք է համարել:

#### ՋՈՒԱՐԱՓԱԿ

Վկայել է Ագաթանգեղոսը. «Եւ մինչ դեռ գային գունդը զօրացն՝ դէպ  
եղեւ նոցա գալ մտանել ի նեղագոյն տեղի մի ի փողոցամէջս համարողացն,  
առ դրունս քաղաքին. քանզի զդրունս քաղաքին աղխեալ էր, զի ժամ էր հա-  
սարակ գիշերոյ, իբրեւ ոչ գտաւ խար երիվարաց զօրուն բազմութեան դար-  
ման կերակրոյ մինչև ի մէջ գիշեր հայեցեալ տեսանէին ի զուարափակ քա-  
ղաքորմի միոջ, զի խոտահամբար մթերեալ էր»<sup>6</sup>: Նշ՞թ-ն այս օրինակի վկա-  
յությամբ հիշյալ բառը բացատրում է խորեւ զուարափակ, զուարակափակ.  
այսինքն բակ կամ փարախ արջառոյ: Աճառյանն էլ զուարափակ-ը բացատ-  
րում է «արջառի փարախ»<sup>7</sup>: Բառարանային մեկնություններում, փաստորեն,  
նկատի է առնվել զուարակ «արջառ, եզ» բառը: Այդպես էլ վարվել է Ագաթան-  
գեղոսի Պատմության աշխարհարարի թարգմանիչը. «...նայեցին ու տեսան,  
որ քաղաքի պարսպից ներս անասունների բակում խոտի դեզեր էին մթեր-  
ված»<sup>8</sup>:

Այս բացատրությունը չի գոհացնում: Առաջին բաղադրիչը զուարակ-ից  
լինելու դեպքում, սպասելի էր զուարակափակ: Իսկ նման ձև, ըստ քննական  
բնագրի, Ագաթանգեղոսի ոչ մի ձեռագրում կամ հրատարակության մեջ վը-  
կայված չէ: Թեև Աճառյանը զուարակ-ի վրացերեն համադրությամբ ենթա-  
դրում է զուար արմատը, սակայն հայերենի բոլոր կազմություններում, որոնք  
բերված են Արմատական բառարանում, զուարակ բաղադրիչն է. զուարա-  
կազուկ, զուարակագենություն, զուարակափիղ: Զուարափակ-ը զուարակ-ի  
հետ աղերսելը, ըստ երևույթին բխեցվել է հատվածի՝ զորքի երիվարի հա-  
մար խոտ, կեր հայթայթելու բովանդակությունից:

Զուարակ (կամ նույնիսկ զուար) «արջառ» բառից լինելու գեպքում չի  
արդարանում զուարափակ կառույցը թե՛ բառակազմության, թե՛ բառիմաստի  
տեսակետից: Դրաբարում «գոմ, փարախ» իմաստով չկա կենդանու անուն +  
փակ կազմությունը: Կարծում ենք, որ զուարափակ-ի առաջին բաղադրիչը  
զուար(ակ) «արջառ»-ը չէ, այլ -զ- մասնիկ (նախդիր) + վար: Վերջինս իրա-  
նական չափ «ծածկ, պատ, որմ» արմատն է, որ զանազան դրսևորումներով  
առկայանում է իրանական լեզուներում ու հայերենի իրանական փոխառու-  
թյուններում. Վարագոյր, տաղաւար, նուարտան, «ծածկոց», պրս. divār  
«պատ»: Այդ արմատն է և պատուար «պատ, պարիսպ» բառում (իր. \*pati-  
vār): Արժե նշել, որ Ագաթանգեղոսի քննական բնագրի հրատարակչի հա-  
վաստմամբ որոշ սկզբնաղբյուրներ ունեն ի պատուարափակ ումի կապակցու-

5 Գ. Զահուկյանը տալտ-ը բխեցնում է հ. և. \*tel «բարձրացնել, կրկն»-ից տե՛ս  
Очерки дописменного периода армянского языка. Ереван, 1967, с. 132—133.

6 Ագաթանգեղոսի Պատմութիւն Հայոց, Տիգրիս, 1909, էջ 27.

7 ՏԼ՝ Ն. Աճառյան. Հայերեն Արմատական բառարան (այսուհետև՝ Արմ.), զուարակ  
բառահոդվածք:

8 Ագաթանգեղոս. Հայոց պատմություն, աշխարհարար թարգմանությունը և ծանո-  
թագրությունները Արամ ՏԼ՝-Ղևոնդյանի. Երևան, 1983, էջ 37.

թյունը, որը մեր ևնթադրության օգտին է խոսում: Նշենք նաև, որ Համշենի բարբառում վարիշ նշանակում է պատ, որտեղ իշ-ը դարձյալ իրանական *išn-* գոյականակերտ, հաճախական ածանց է<sup>9</sup>:

#### ԽՈՋ

Արմ.-ում ստուգաբանված չէ: Ստուգաբանության պատմության մեջ ներշ-վում են մի շարք ենթադրություններ, որոնք մերժելի են: Աճառյանը հիշեցնում է, որ Հյուբշմանը բառը կապում է իրանական *xuk* «խոզ»-ի հետ: Կարծիրը հաստատող բավարար փաստեր չլինելու պատճառով Հյուբշմանի բացատրությունը ընդունելություն չգտավ:

Իրանական լեզուներում գործող հնչյունական-հնչյունափոխական մի շարք օրինաչափությունների բացահայտումը թույլ է տալիս հաստատելու ներշ-ված բառի իրանական լեզուներից հայերենին անցնելու փաստը: Անհերքելի է, որ իրանական լեզուներում գործել է *K > Ć* հնչյունափոխությունը, որը հաստատվում է ինչպես բուն իրանական նյութի, այնպես էլ հայերենի իրանական փոխառությունների տվյալներով: Այսպես, նույն արմատն է փոխառվել *մոյկ* «կողիկ» և *մուցակ* «կողիկ» բառերում: Իրան. *tok/roc* «օր, լույս» արմատից՝ պատռոյգ (*կ > ք* օրինաչափ հնչյունափոխությամբ), նաև՝ ոռնիկ, պատռուցակ: Իրան. *tak* «վազել, հոսել» արմատից՝ ասպատակ, շահատակ, վտակ, նաև՝ տաճիկ «արագավազ»: Իրանական լեզուներում գործել է նաև *Ć > z* հնչյունափոխությունը: Հայտնի է և վերջինիս մոտավոր ժամանակագրությունը: Միջին պարսկերենում միջձայնավորային և հոձայնավորային դիրքերում *Ć > z* անցումը կատարվել է սասանյան շրջանում (III—VII դդ.): Առկա են *k > Ć > z* եռաստիճան հնչյունափոխության փաստեր: Օրինակ, վըտակ-տաճիկ-ի *tak/tac* արմատն առկա է բարբառային թաղի «արագավազ» բառում կամ՝ պատռոյգ-ոռնիկ-պրս *rūz* «օր»: *vak/vaĉ* «խոսել, երգ»-նուագ (դարձյալ *կ-ք* հնչյունափոխությամբ)-աւալ «ձայն, երգ» (միջին իրան. *avāĉ* «ձայն»)-պրս *av āz* «ձայն»:

Խնշ կապ ունի հնչյունափոխության այս երևույթը խոզ բառի ստուգաբանության հետ: Պարզվում է, որ ունի: Գրաբարում կա խոզ բառի խոն տարբերակը, որ առկայանում է խոնկոռ ձևում (խոն «խոզ» + կոր «ձագ»): Թեև Աճառյանը Արմ.-ում խոն-ը համարում է կովկասյան լեզուներից կատարած փոխառություն՝ համեմատելով դեջի, ղուրի. ձևերի հետ, բայց այս աղբյուրը խիստ առարկելի է, մանավանդ Աճառյանն էլ կարծում է, որ «հայերենին ծնունդ տվող ձևը պիտի լիներ ղոճի կամ ղոջի, ուր -ղ- ձայնը դարձել է խ, ըստ որում հին հայերենում դ ձայնը գոյություն չունի»<sup>10</sup>:

Անշուշտ, կարելի է պարզել իրանական լեզուներից հայերենին անցած խոն/խոզ-ի հարաբերությունը կովկասյան լեզուների համապատասխան ձևվերի հետ, որն այլ հարց է: Բայց կասկածից դուրս է, որ հայ. խոզ բառը և նրա խոն տարբերակը մոտեք են գործել իրանական լեզուներից՝ անկախ նրա հնդեվրոպական կամ փոխառվել լինելու հանդամանքից: Ընդ որում խոզ-ը ավելի նոր ձև է, քան խոն և պրս. *xuk* զուգահեռը:

#### ՆԱԽԱՄԷՋ

Բառիս հանդիպում ենք մեկ անգամ՝ Բուզանդի մոտ. «Թող թե Եմիս կամ զգինի ճաշակիլ, որ ղնախճամիջ պարն լուրջուցուցմալ մաճկացուցանէ և զճարպն և զերիկամամբքն պառնեալ»<sup>11</sup>:

<sup>9</sup> Համշենի բարբառի իրողությունը մեզ հաղորդել է ուբարտագետ Հ. Կարապոյանը (բանավոր):

<sup>10</sup> Տե՛ս Արմ. խոնկոռ բառի տակ:

<sup>11</sup> Փառապետի Բուզանդացու Պատմություն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, էջ 71:

ՆՀՔ-ն նախնամ էջ պար բառահորովածը մեկնում է աղիք կամ փորոտիք մեծ, թաղիրթ, փոր, կամ մէջ շուրջ զերիկամամբք: 2. Աճառյանը Արմ-ում նախիճը կասկածելով (?նշանով) մեկնում է դարձյալ ճորովայն, փոր: Այդ իմաստն է դնում և աշխարհաբարի թարգմանիչը. «Ո՞ր մնաց, թե մի-սը կամ գինին ճաշակեն, որոնք որովայնը պարարում ու երիկամները ճար-պով պատում են»<sup>12</sup>: Վ. Առաքելյանը, ուշադրություն դարձնելով Բուզանդի այս հատվածին, գրում է. «Մեզ թվում է, թե պարն պետք է ուղղել պոր, որ հա-գուստի փորի մաս նշանակվածը մնացել է մեր խոսվածքում, իսկ նա-խիճ, որ Աճառյանը բացատրում է փոր, նշանակում է աղբ, նախնամէջ նշանակում է աղբամեջ (մեջը աղբոտ): Բուզանդը արհամարհանքով է խո-սում փորի մասին»<sup>13</sup>:

Անկախ բառի ստուգաբանությունից մեզ համոզում է նախիճ-ի այս բա-ցատրությունը: Կարող ենք նաև այլ օրինակներ բերել V դարի մատենագրու-թյունից, երբ փորի, աղիքների մասին արհամարհանքով է խոսվում և ավե-լացվում աղբաբոյն, աղբաման մակդիրները: Ահա 2. Մանգակունուց ՆՀՔ-ի վկայած օրինակը. «Որդունքն ղուղիցին և զաղբաբոյն որովայնն փտեալ ապականիցէ»: Նման մի օրինակ էլ կա Եվսեբիոս Եմեսացու ԺԲ ճառում. «Հաստատեաց և զայլ ևս փորոտին, որ աղբով և այլ ևս ազգի ազգի ծահիւք լի են, պէսպէս խորտկաց, զոր ուտէ մարդ, զի յորժամ սիրուն հանճարա-կան հպարտանայցէ, սաստեսցէ ի նա փորն աղբաման»<sup>14</sup>: (Ի դեպ, աղբա-ման բառը չկա ՆՀՔ-ում): Մեր կարծիքով խորենացու աղբիւս «աղբանոց» բառը դարձյալ փորին է վերաբերում: Բերենք այդ հատվածը. «Բայց այլ ոչ ինչ գործ արութեան և քաջութեան եցոյց. այլ ուտելեաց և ըմպելեաց պա-րապեալ... զիշաւայրիս և զխոզս արածելով... ծառայ և ստրուկ որովայնի արդարեւ լինելով՝ զաղբիւս մեծացուցանէր»<sup>15</sup>: Խոսքը Արտավազդ թագավո-րի մասին է: Մալխասյանը թարգմանել է. «Միայն իր փորի ծառան ու ըստ-րուկը դառնալով՝ աղբանոցներ էր մեծացնում»<sup>16</sup>: Ծիշտ է, աղբիւս (աղբիւք) նշանակում է «աղբանոց», բայց այս հատվածում այն փոխաբերացված է և նկատի ունի փորը, որովայնը: Ավելի ճիշտ է Խ. Ստեփաննի թարգմանու-թյունը. «...արդարեւ փորի ծառայ և ստրուկ լինելով, նա աղիքներն էր մե-ծացնում»<sup>17</sup>:

#### ՇԱԽԱԿԻ

Բառը վկայված է մեկ անգամ: Ռենքն Շապուհ արքայ հեծեալ ի ձի, շա-ւալի անցանէր առ կանանովն»<sup>18</sup>: ՆՀՔ-ն համարում է անհայտ բառ. «Իբրև արշաւալի և կամ որպէս այլազգ կամ փառօք կամ ցօփութեամբ»: Արմ-ում Աճառյանը համարում է գրչագրական սխալ և ուղղում՝ արշաւալի<sup>19</sup>: ՆՀՔ-ն արշաւալի-ն բացատրում է «արշավելով, արագ ընթացքով, հեշտով»: 2. Ա-ճառյանի ուղղումը մեր կարծիքով չի արդարանում հենց իմաստի տեսակե-տից: Մեջ բերենք ամբողջական համատեքստը. «...Ապա հրաման տայր թա-

<sup>12</sup> Փ ա վ ս տ ո ս Բ ու զ ա ն դ. Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի. Երևան, 1968, էջ 138:

<sup>13</sup> Վ. Առաքելյան. Անկարկներ հայոց գրական լեզվի պատմության. Երևան, 1981, էջ 167:

<sup>14</sup> Տե՛ս «Հանդես ամսօրյա», 1959, էջ 174:

<sup>15</sup> Մովսիսի խորենացու Պատմություն Հայոց. Տիգրիս, 1913, էջ 137:

<sup>16</sup> Մ ո վ ս ե ս Խ ո ռ ե ն ա ջ ի. Պատմություն հայոց, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրություններն ակադեմիկոս Ստ. Մալխասյանցի. Երևան, 1968, էջ 154:

<sup>17</sup> Մովսես խորենացու հայկական պատմություն, աշխարհաբար թարգմանեց և լուսաբա-նեց Խորեն ծայրագոյն վարդապետ Ստեփանէ. Ս. Պետերբուրգ, 1889, էջ 120:

<sup>18</sup> Փավստոսի Բուզանդացու Պատմություն Հայոց. Ս. Պետերբուրգ, 1883, 150:

<sup>19</sup> Տե՛ս արշաւ բառի տակ:

գաւորն Պարսից Շապուհ ... հոլանել զամենայն ազատ կանանին և նրստուցանել աստի անտի ասպարիսին. և ինքն Շապուհ արքայ հեծեալ ի ձի, շուակի անցանէր առ կանանովն և որ յակն գային, մի մի ի նոցանէ պղծեալ ի խառնակութիւն տանէր առ ինքն...»:

Հասկանալի է, որ նման իրադրության մեջ Շապուհը արշավակի, սրընթաց չէր գնա: Արշաւ-ը իրանական փոխառություն է \*adi-šav(ana), որտեղ արմատն է šavav'šav «գնալ, քայլել»: Այդ արմատը զանազան մասնիկների հետ կազմում է նոր բառեր՝ նոր իմաստներով: adi (ար) մասնիկի հետ՝ արշավ(ան), քա կամ upa-ի հետ ապաշաւ «զղջալ»: Ի դեպ, ինչպես նկատում է Աճառչանը, ապաշաւ-ի նախնական «ետ գնալ» իմաստը առկա է հետևալ օրինակում. «Ապաշաւես՝ դու ի շարեացդ քոց»<sup>20</sup>:

Բուզանդի վկայած շաւակի-ն, ուրեմն, ներառում է šavav'šav «գնալ, քայլել» արմատը, և բառը ուղղելու հարկ չկա: Արեւելի բարբառում էլ գործառում է շովի «գնալ» բառը: Ի՞նչ կարելի է ասել շաւակի-ի ակի ձևույթի մասին: Գրաբարում այդ ածանցը գործուն էր. հմմտ. սովորակի, յանկարծակի, փութակի...: Հնարավոր է նաև մեկ այլ իրողություն: Միջին իրանական լեզուներում (օրինակ միջին պարսկերենում) -ak- ածանցը գրվելով բայի ներկայի կամ անցյալի հիմքի վրա կերտում է գոյականներ (բայաններ): handaxtan «չափել, հաշվել» ներկայի հիմքն է handāz, որից՝ handāzag «չափ, ձև»: Vidardan «անցնել»—vidarag «անցում, ուղի»<sup>21</sup>: Ուրեմն, ենթադրելի է և իրան. \*šavak-ի «ընթացք, քայլք, երթ» առկայությունը՝ ի մակբայակերտ ածանցով: Անկախ իրան. ak կամ հայ. ակի ձևույթ տեսնելու հանգամանքից շաւակի բառը չպիտք է մերժել:

#### ՊԱՏՄԱՆ

Ուկեբերանի՝ Եփեսացու մեկնության մեջ կա այսպիսի մի հատված. «Նուազագուն քան զնոսա արար զսա շափով. մարմնով փոքր ինչ հասակապատման»: Պատման այստեղ ունի «շափ» իմաստը: Այդ է հուշում նաև նույն նախադասության մեջ արար զսոսա շափով հատվածը, նաև վերը բերված նախադասությունից մի քանի տող վերև՝ «վասն այնորիկ կազմեաց աստուած մարմնոցս շափս...» միտքը: Նշենք, որ գրաբարում հաճախական է շափ հասակի կապակցությունը: Ահա մի քանի օրինակ ՆՀԲ-ից. «Արանց և կանանց և ամենայն շափոյ հասակի», «Չափ հասակի սուրբ տիկնոջ» և այլն:

Բանասեր Ե. Դուրյանը իր ուսումնասիրություններից մեկում պատմանի դիմաց հարցական նշանով ուղղում է պայման<sup>22</sup>, իմաստի տեսակետից այս ուղղումը մերժելի չէ: Արմ-ում պայման բացատրվում է «դաշն, դաշինք, ոճ, ձև, կերպ», բայց այն ունեցել է նաև «շափ» նախնական իմաստը: Ըստ Արմ-ի Ագաթանգեղոսի մոտ վկայված անպայման սխալների նշանակում է «շափից դուրս, շափազանց»: Նշենք, որ պայման-ը իրանական փոխառություն է ma «շափ» արմատից: Իրանական լեզուներում բառի տարբերակներից մեկը ամենայն հավանականությամբ եղել է \*patman հմմտ. patmanak «դաշինք», որտեղ pāt-ը նախամասնիկ է, որ հանդիպում է հայերենի իրանական մի շարք փոխառություններում. պատմունան, պատմունակ, պատկեր, պատրաստ... և այլն: Այժմ իրանագիտությանը հայտնի է մի այլ երևույթ ևս: Պարթևերենի pāt մասնիկին միջին պարսկերենում համապատասխանում է pay: Ըստ այդմ, հայերենի իրանական բառաշերտի մեջ պարթևերենից կամ հյուսիսարևմտյան լեզուներից են պատմունակ, պատմունան, պատուաստ, պատկեր, պատրաստ..., միջին պարսկերենից կամ հարավ-արևմտյան լեզուներից՝

<sup>20</sup> ՏՃՍ ապաշաւ բառի տակ:

<sup>21</sup> ՏՃՍ Основы иранского языкознания. М., 1981, с. 68.

<sup>22</sup> Մատենադրութիւն նախնաց. Ոսկեբերան. Վենետիկ, 1862, էջ 867.

<sup>23</sup> Ե. Դուրյան. Ուսումնասիրությունը և քննադատությունը. Երուսաղեմ, 1935, էջ 392.

պայքար, պայուսակ, պայազառ և այլն: Ուրեմն, պատման-ի դեպքում գործունենք հյուսիս-արևմտյան լեզուների pat(1)maռ ձևի հետ, որն իմաստով և ձևով ավելի հին է, քան հայերենում հաճախական պայման-ը: Միջանկյալ նշենք, որ Ոսկեբերանի հայ թարգմանիչը օգտագործում է իրանական հնադույն և ոչ հաճախական ձևեր. պարշարել (փխն. պաշարել), բարժանել (փխն. բաժանել), պարենել (փխն. պանել), վոճուկ (փխն. վճուկ) և այլն:

Ի դեպ, պատմանը չի վկայված հայերենի և ոչ մի բառարանում: Եթե մեր նկատառումները արդարանան, ուրեմն գործունենք հնագույն վկայության մի գեղեցիկ օրինակի հետ, որը պետք է արձանագրել գրաբարի բառարաններում:

#### ՔԱՐՈՒԱԿ, ՔԱՐՈՒԱԿԱՆՔ

Վկայված է V դարից: ՆՀԲ-ն փարուակ-ը մեկնում է «ամօթապարտ, խայտառակ», փարուակաճ-ը՝ «ամօթալի գործ, յոռութիւն, տձևութիւն»: Արմատական բառարանում էլ նույն մեկնությունն է, իսկ փարուակ կալ կապակցությունը Աճառյանը բացատրում է «ամոթալի գործով խայտառակվել»: Բերենք վկայություններ մեղ հետաքրքրող բառով. «Զամաչիցե՞ս աւելի քան զնոսա քարուակ կալով» (ՆՀԲ): «Եւ ընդ այս զի՞ զարմանայցես. զի զմատնիչն զպիղծ և զանամօթ և զակնկոր առ ամենեսեան՝ այսպիսիք քարուականք ւսծին ի խեղղն և կախաղանի»<sup>24</sup>:

Արմատական բառարանում բառը ստուգաբանված չէ: Ստուգաբանության պատմության մեջ նշվում է միայն մի կարծիք՝ փաւ բառից, որը բոլորովին անտրամաբանական է: Ստուգաբանության այլ փորձ մեղ ծանոթ չէ: Մեր կարծիքով բառի փաւ և վակ (ուակ) բաղադրիչները իրանական ծագում ունեն: Առաջինը իրան. kar «գործ» արմատն է, որը առկա է հայերենի իրանական մի շարք փոխառություններում՝ ապիկար, կարաւոր, պայքար, փառաւ (կ-ֆ հնչյունափոխությունը օրինաչափ է, բացի դրանից ֆ-ով ձևերը ժամանակագործեն ավելի նոր են): Մի խոսքով, այդ արմատը բավական հաճախական է հայերենում՝ ներկայանալով նաև իմաստային նրբերանգներով, որ գալիս է դեռևս փոխառու լեզվից: Քարուակ, փարուակաճ-ի բացասական իմաստը տալիս է բաղադրության երկրորդ ուակ բաղադրիչը, որը մեր կարծիքով իրանական vāk «խոսք, ասել» արմատն է: Ենթադրելի է, որ նախնական իմաստը եղել է «խոսքի առարկա դարձած գործ, վատ, ամոթալի գործ»: Համեմատության համար բերենք նշուակ բառը, որ նույնպես իրանական փոխառություն է՝ նիշ և ուակ (vak) «խոսք» կազմությամբ: Ուշագրավն այն է, որ փարուակ-ը և նշուակ-ը համանիշներ են: Ահա մի օրինակ դարձյալ Ոսկեբերանից. «Ասացից եւ առ ձեզ, որք նշուակիքդ և քարուակ կայք ի հրապարակս»<sup>25</sup>: է. Աղայանը նույնեմ բառի մեջ էլ իրավացիորեն տեսնում է իրան. vač «խոսել, խոսք» արմատը, ըստ այսմ \*ni-vačah պետք է նշանակած լինի «խոսքի տակ գցել, իր խոսքին ենթարկել, ապահովության երաշխիք առնել»<sup>26</sup>: Հիշենք, որ vač-ի մի տարբերակը, գուցե և նախնականը, եղել է vak: Վերջինիս իմաստային փոխանցման համար կարելի է համեմատել հայ. առակ «խոսք, պատմություն» և առակաճ «ամոթանք, խայտառակություն, ծաղր», առակել «խայտառակել, նշավակել»:

<sup>24</sup> Յովհաննու Ոսկեբերանի յաւետարանագիրն Մատթէոս. Վենետիկ, 1826, էջ 195:

<sup>25</sup> Նույն տեղում, էջ 229:

<sup>26</sup> է. Աղայան. Բառաքնական և ստուգաբանական հետազոտություններ, Երևան, 1974, էջ 126:

## НЕСКОЛЬКО ЛЕКСИКОЛОГИЧЕСКИХ НАБЛЮДЕНИИ

Л. Ш. АВАНЕСЯН

## Резюме

В статье даны этимологии нескольких древнеармянских слов. *աճաճիկ* „застенчивый“. Исходя из форм *աճաճիկ*—*աճաճիկ*—*աճաճիկ*, предполагается конструкция *աճաճ* „стыд“ + *իկ* „наполнять, полный“ + суффикс *իկ*. Этимология этого слова позволяет констатировать, что в некоторых параллельных формах типа *թաթիկ*—*թաթիկ* „тоска“, *թաթիկ*—*թաթիկ* „просьба“ первичными являются формы с *-իկ* (древний 1). *Հաղարիկ*—этимология *հաղարիկ* „бык“ + *իկ* „закрывать“ не является убедительной; *սար*—несомненно иран. *var* „стена, забор“. *Հաղարիկ*—„загражденный забором“. *կոկ* „свинья“—переход *k > s > z* в иранских языках свидетельствует о том, что армянское слово заимствовано из среднеперсидского языка. В армянском сохранена и форма *хос* в слове *կոկ* (հոս „свинья“, հոս „детеныш“). Ср. также перс. *xūk* „свинья“. Первый компонент слова *շաղիկ*—*շաղիկ* у Фавстоса Бузанда означает „мусор“. Слово *շաղիկ* того же автора не нуждается в поправке (*աղ*) *շաղիկ*; *շաղիկ* представляет иран. корень *šyav/šav* „идти“. *Չափ* „мера“—не зафиксированное в армянских словарях слово, несомненно, иранского происхождения, *ratimāp*—арм. *չափ* „условие, мера“. *Դարակ* „позорное дело“ также иранского происхождения (каг „дело“, *vak* „слово“—ср. *հարակ*).